ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Ամերիկահայությունը որպես գաղթաշխարհի ամենից ստվար ու կազմակերպված հավաքականություն իր գոյության ողջ ընթացքում մշտապես պահպանել է հոգեգիտակցական կապը հայրենի երկրի ու ժողովրդի հետ, բարոյապես ու նյութապես նեցուկ կանգնել նրանց առաջընթացին: Սփյուռքահայ մտավորական Գ. Մելիտինեցու պատկերավոր բնորոշմամբ, ամերիկահայ գաղութը, մասնավորապես Հայոց ցեղասպանության և հաջորդող տարիներին, «...նախախնամական դեր կատարեց թրքական դժոխքէն մազապուրծ ազատուող հարիւր հազարաւոր հայ որբերուն, կարօտեալներուն հանդէպ եւ իր հոգեկան բաւարարութիւնը, հայրենասիրական ապրումներու յագեցումը գտաւ բոլորին օգնութեան հասնելու, բոլորին անվերապահօրէն տալու, վերք բուժելու նուիրական պարտականութեան մէջ...»:[1]

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից պատմական տարբեր հանգամանքների բերումով ԱՄՆ-ում ստվարացած հայությունը հայրենի երկրի ու ժողովրդի համար ճակատագրական դարձած տարիներին, համախմբելով երկրի ներհամայնքային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր այլ միջոցներով, ամերիկյան մարդասիրական, խնամակալական, քաղաքական և այլ կառույցների հետ գործակցված, սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանությանը, ազատագրմանն ու վերականգնմանը: Ամերիկահայերը մասնակցել են ինչպես բնօրրանում ծավալված կամավորական շարժումներին, այնպես էլ բազմահազար հայրենակիցներին ու գաղթականներին սատարելուն, Եվրոպայում և ԱՄՆ-ում Հայ Դատի պաշտպանությանը հետամտող քաղաքական, դիվանագիտական, ռազմական և այլ բնույթի ձեռնարկներին: Ամերիկահայ ազգանպաստ այդպիսի միավորներից էին հայրենակցական միությունները, քաղաքական կուսակցությունները, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ամերիկյան մասնաճյուղը, Ամերիկայի Հայ Կարմիր Խաչը, Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցությունը, Ամերիկայի Հայ Ազգային Միությունը և այլ կազմակերպություններ:

Անցյալ դարի 90-ական թվականներին, ապա՝ 20-րդ դ.

սկզբին և վերջապես՝ Առաջին աշխարհամարտի տարիներին ու դրան հաջորդող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և օսմանյան Թուրքիայի հայաբնակ տարածքներում հայ բնակչության նկատմամբ իրականացված պարբերական ջարդերը, կոտորածներն ու Մեծ եղեռնը, և որպես հետևանք՝ թշվառությունը, սովը, համաճարակներն ու զրկանքները չէին կարող անարձագանք թողնել օվկիանոսից այն կողմ՝ իրենց հայրենակիցներին: Ահա թե ինչու, ԱՄՆ-ում գործող Կրթասիրաց, Ուսումնասիրաց ու Դպրոցասիրաց ընկերությունների կողքին, հատկապես 1900-ական թվականներից սկսած, աստիճանաբար ի հայտ են եկել հայրենակիցներին ամեն կերպ սատարելուն, ավերված բնակավայրերն ու կրթօջախները վերականգնելուն, ինչպես նաև անհամար որբերին նեցուկ կանգնելուն կոչված բազմաթիվ հայրենակցական ընկերություններ ու միություններ, որոնք, սերվելով վերոհիշյալ կազմակերպություններից և ժամանակի ընթացքում ու պատմական հանգամանքների բերումով վերակառուցելով դրանց նախկին գործունեությունը, արդեն 1914 թվականից, իրենց առջև դրված նոր խնդիրներին համապատասխան, կրել են Այրիախնամ, Որբախնամ, Որբասիրաց, Աղքատախնամ ու Նպաստամատույց անուններ: Վերոհիշյալ նոր ընկերությունների կողքին, դրանց հետ համագործակցված, գործել են նաև մի շարք հայրենակցականների Տիկնանց որբախնամ և Հիվանդանոցային օժանդակ ընկերություններ: Թվարկված բոլոր ընկերություններն էլ զգալի նյութական միջոցներ են հատկացրել տարագրված և, հատկապես, Դեր Զոր ու արաբական անապատի այլ տարածքներ քշված հայրենակիցներին հայտնաբերելու և նրանց բազմակողմանի օգնություն ցույց տալու համար, զգալի ներդրում ունեցել կովկասյան, ապա՝ կիլիկյան կամավորական շարժումներին նյութապես ու բարոյապես, նաև՝ զինվորական ու զինական առումներով խթանելու ուղղությամբ, Սբ. Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսարանների միջոցով դրամական օժանդակություն առաքել՝ ի նպաստ կարոտյալ հայրենակիցների, բոլոր միջոցներով աջակցել Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի, ՀԲԸՄ-ի և այլ կազմակերպությունների ազգօգուտ ջանքերին:

Առաջին աշխարհամարտի ավարտին, երբ արդեն առկա էին երիտթուրքական պետության պարտության նշանները, ու դրանից հետո, երբ այդ պարտությունն արդեն իրականացված փաստ էր, հայության շրջանում ակտիվացել էր հայրենի քանդված օջախներ վերադառնալու և դրանք նորից նոր վերաշինելու նվիրական ցանկությունը: Այդ նպատակով կազմակերպվել էին Վերաշինաց, ինչպես նաև Հայրենակցական անունները կրող միությունները, որոնք իրենց առջև խնդիր էին դրել օգնել տարագիր հայրենակիցներին հետ վերադառնալ հարազատ բնակավայրերը, այնտեղ կառուցել հիվանդանոցներ, որբանոցներ, աշխատանքային արհեստանոցներ, վերաշինել դպրոցներն ու եկեղեցիները, նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ որբացածներին ու այրիացածներին, կարիքավորներին ու անաշխատներին: Հիշյալ միությունները բազմիցս կազմակերպել են հանգանակիչ հավաքներ, ժողովներ, հանդիսություններ ու բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնց ընթացքում հավաքված հասույթը տրամադրվել է ի նպաստ Բեյրութում, Հալեպում, Բաղդատում, Դամասկոսում, Աթենքում, Մալոնիկում, Մարսելում և այլ վայրերում գտնվող տարագիր հայրենակիցներին, մասնակցել համազգային ձեռնարկներին ու հանգանակություններին, աջակցել Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի և հայանպաստ

այլ ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին:

Հսկայական էին ՀԲԸՄ ամերիկյան մասնաճյուղի ջանքերն Առաջին աշխարհամարտի տարիներին ու դրանից հետո: Այն իր վրա էր վերցրել նաև որբախնամ առաքելություն, Մերձավոր Արևելքի Նպաստամատույց ընկերության հետ հայրենի կարոտյալների համար հանգանակել 23400 դոլար, մասնակցել «Ոսկե Կանոն» ազգային քարեսիրական, 1919թ.՝ Զորավար Անդրանիկի կազմակերպած՝ Ազգային փրկության, որբանոցներից արձակված և բախտի քմահաճույքին հանձնված չափահաս հայ որբերին աջակցելու կոչված Ինքնօգնության հանգանակություններին:[2]

ԱՄՆ-ում կազմակերպվել են նաև ՀԲԸՄ օժանդակ մարմիններ, օրինակ՝ Տիկնանց որբախնամը (1917թ.), ինչպես նաև ամերիկահայ գործարար անհատների կողմից Նյու Յորքում հիմնված Գյուլբենկյան հիմնարկությունը (1920թ.), Հովարդ Գարագոզյան հիշատակային ընկերությունը (1921թ.), որոնց նպատակն էր բոլոր միջոցներով սատարել Հունաստանում, Սիրիայում, Լիբանանում և հարակից այլ տարածքներում ապաստանած իրենց տարագիր հայրենակիցների ազգապահպանությանը, կրթությանը, զբաղվածությանն ու հոգևոր կյանքին՝ մեծապես աջակցելով Հայ փախստականների կոմիտեների գործունեությանը:[3]

ԱՄՆ-ի հայ ավետարանականների ջանքերով 1918թ. հունիսի 7-ին Ուստրում հիմնվել է Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը, որը, ի շարս այլ խնդիրների, Մերձավոր Արևելքում կազմակերպել է աստվածաբանական հաստատություններ, նեցուկ կանգնել տեղի հայ ավետարանական եկեղեցիներին, դպրոցներին, որբանոցներին:[4]

Խանդավառված Թիֆլիսի Ազգային բյուրոյի կոչերով, ամերիկահայությունն իր մասնակցությունն է բերել նաև Կովկասյան կամավորական շարժմանը՝ մարդկային, ռազմա-տեխնիկական և նյութական առումով (ընդհանուր առմամբ, ողջ ամերիկահայությունը կովկասյան կամավորական շարժմանը տրամադրել էր շուրջ 342000 դոլար): «Ամերիկայից եկած կամաւորները զրեթէ բոլորն էլ գալիս են իրենց սեփական ծախսով և միաժամանակ իրենց հետ բերում են մեծ քանակությամբ ընտիր զէնքեր: Սակայն, ցաւօք սրտի, պէտք է ասել, որ բոլոր բերած զէնքերը, դրանց հետ նաև բազմաթիւ դաշտային հեռախօսներ և հեռադիտակներ Թիֆլիսի մաքսատանը ենթարկւում են ռեկվիզիցիայի Նիկոլայ Նիկոլայեվիչի և զեն. Եանուշեվիչի նենգ և հայատեաց կառավարութեան կողմից և մինչև վերջն էլ չեն տրւում իրենց տէրերին, - մի հանգամանք, որ յետագայում մեծապէս նպաստեց ամերիկահայ կամաւորական շարքերում լքումն առաջանալուն», - հիշատակվում է Ազգային բյուրոյի տեղեկագրում:[5]

Ամերիկայի հայերի կազմակերպած բացատրական աշխատանքների շնորհիվ 1916թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի և Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Հայոց օր», և, ի պաշտպանություն Հայ Դատի, շուրջ 400 ամերիկյան քաղաքներում կազմակերպվել են օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բողոքի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև հայանպաստ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր սրտակցությունն է արտահայտել թուրքական բռնապետությունում հետապնդվող և հալածվող քրիստոնյա ազգություններին և նվիրաբերել ավելի քան 30 մլն դոլար: Շուտով կազմակերպվել է Հայաստանի ամերիկացի բարեկամների Հայաստան-Ամերիկա ընկերությունը, որը հայ-

կական հանձնախմբի խորհրդատվությամբ, մինչև Լոզանի վեհաժողովը, ամերիկյան հասարակության և կառավարության շրջանում իրականացրել է Հայ Դատին ի նպաստ ձեռնարկներ:[6]

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից ամերիկահայ ազգային գործիչների ջանքերով հնարավոր է դարձել հայրենի երկրի ու ժողովրդի համար ճակատագրական պահին առանձին միավորումներով համախմբել ընդհանուր առմամբ միասնական գործելու պատրաստակամություն դրսևորած տեղի ազգային, հասարակական, քաղաքական կազմակերպությունների գործունեությունը: Ամերիկահայ այդպիսի միջկուսակցական և ազգային մարմիններից էին՝ Միջկուսակցական խորհրդաժողովը (1914թ., Բոստոն), որը շուտով վերանվանվել է Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախմբի, Ազգային շահերի պաշտպանության միությունը (1915թ., Նյու Յորք) և այս երկուսի միավորումից ստեղծված Ազգային պաշտպանության Ամերիկայի միությունը, ինչպես նաև ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցչական մարմինը՝ Ամերիկայի հայ ազգային միությունը (1917թ., Բոստոն): Հիշյալ Միությունը բաղկացած էր քաղաքական չորս կուսակցությունների (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն, Հայ սահմանադրական-ռամկավար), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները, միասնականություն էին հանդես բերել ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ: Միության նպատակն էր ամերիկահայ նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի ազատագրմանը, ինչպես նաև՝ հայանպաստ պրոպագանդա և դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել:

Հայաստանի ազատագրության նպատակով Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած կարևոր ձեռնարկներից էր ամերիկահայության շրջանում կամավորական շարժման կազմակերպումը, որը մեծ խանդավառություն էր առաջ բերել գաղութում. «Հազարաւորները կը ձգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապահով կեանք ու փայլուն ապագայ՝ զոհաբերելու համար կորիզը «հայկական բանակին»: Կարճ ժամանակում՝ ընդհամենը վեց ամսում (1917թ. հունիսի 9-նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել էր 5000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1172-ին: Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսենիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ: «Արևելյան լեգեոն» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ Ջիմ Չանգալյան, Հայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Հերյան, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան և այլոք):

Ամերիկահայ կամավորներն «Արևելյան լեգեոնի» իրենց քաջարի հայրենակիցների հետ միասին լուրջ ավանդ են ներդրել 1918թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների վրա թուրքական բանակին պարտության մատնելու գործում:[7]

Ամերիկայի հայ ազգային միությունը (ատենապետ՝ Միհրան Սվազլը) երկրի ողջ հայության հետ միասին իր գործուն մասնակցությունն է ունեցել Կիլիկիայի ազատագրման նպատակով կազմակերպված կամավորական շարժմանը, 1918թ. մարտին ձեռնարկված 1 մլն դոլարի հանգանակությանը, 1919թ. իրականացրել է գաղութը համախմբող՝ Փարիզի Համազգային Ժողովի պատգամավորների ընտրությունները, ամերիկյան Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հետ օգնել է եղեռնից վերապրած հայ որբերին ու կարոտյալներին, աջակցել ՀՀ առաջին վարչապետ Հ. Քաջազնունու կողմից ի նպաստ հայոց բանակի ԱՄՆ-ում կազմակերպված հանգանակիչ առաքելությանը, ինչպես նաև Փարիզի Ազգային խորհրդի նախագահ Պ. Նուբարի հանձնարարությամբ՝ 1919թ. նոյեմբերին Զորավար Անդրանիկի և հրամանատար Հակոբ Բոնապարտյանի կողմից ԱՄՆ-ում կազմակերպված Ազգային փրկության հանգանակությանը:

Ամերիկայի հայ ազգային միությունը ԱՄՆ-ի, ինչպես նաև Եվրոպայի հանրությանը Հայաստանն ու հայերին ներկայացնելու նպատակով հրատարակել ու տարածել է քաղաքական, պատմական ու գեղարվեստական բնույթի մի շարք աշխատություններ: ԱՄՆ-ի կառավարող շրջաններում ծավալած հայանպաստ գործունեության արդյունքում՝ նախագահ Ու. Ուիլսոնը Հայաստանի Հանրապետություն է առաքել գեներալ Ջ. Հարբորդի ղեկավարությամբ քննիչ հանձնախումբ, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ՝ Ուորրեն Հարդինգ) 1918թ. աշնանն ունկնդրության է դրել Հայոց հարցին առընչվող հաղորդումները:[8] Միության ջանքերով 1919թ. երկրի հասարակական ու քաղաքական ոլորտներում հայերի նկատմամբ համակրանք ձևավորելու և ԱՄՆ-ին Հայաստանի լիակատար անկախության իրավունքը ճանաչել տալու նպատակով, 60 հայասեր ամերիկացիների համախմբումով ստեղծվել է Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (նախագահ՝ Ջեյմս Ջերարդ), ինչպես նաև ամերիկյան առաջադեմ հասարակության 15300 ներկայացուցիչներ խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին՝ փութացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի խաղաղության ժողովում վերջինիս ձեռնարկները և դրանք վերածելու գործուն քայլերի:[9] Առաջին աշխարհամարտից հետո միությունն ԱՄՆ-ի և եվրոպական պաշտոնյաների կողմից ճանաչում ստացած անցագիր-վկայականներ է տրամադրել դեպի հայրենիք մեկնող իր հայրենակիցներին: Հեռատես քաղաքական գործիչ և հմուտ դիվանագետ Միհրան Սվազլի ղեկավարությամբ գործող Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համազգային, մինչև անգամ միջազգային ու հատկապես ամերիկյան պետական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ԱՄՆ-ի պաշտոնական խավերի կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին:[10]

Իր պատմության ընթացքում եվրոպական դիվանագետների կողմից բազմիցս հուսախաբված հայության զգալի հատվածը, ամերիկահայ իր հայրենակիցների ծավալած հայանպաստ գործունեությունից գոտե-

պնդված, Հայ դատի լուծումը կապում էր ԱՄՆ-ի ու նրա նախագահ Ու. Ուիլսոնի հետ՝ հուսալով ամեն տեսակի, այդ թվում նաև՝ քաղաքական օգնություն: Սակայն ամերիկյան Կոնգրեսում հայկական վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողությունը հաստատելու վերաբերյալ Ու. Ուիլսոնի ներկայացրած առաջարկի մերժումը, ինչպես նաև միջազգային-քաղաքական ասպարեզում ստեղծված նոր պայմանները ի դերև արեցին սպասելիքները:

Ամփոփենք՝ ամերիկահայությունը, հավատարիմ իր արյան կանչին, մշտապես եղել է իր ժողովրդի կողքին՝ նյութապես ու բարոյապես սատարել մայր հայրենիքի կարիքներին:

Ներկայումս ևս ամերիկահայությունը հետևողականորեն շարունակում է հավաքական ջանքեր գործադրել ամերիկյան և միջազգային քաղաքական ու պետական ատյաններում Հայոց ցեղասպանության իրողության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ՝ հանուն պատմական արդարության և մարդկության խաղաղ գոյակցության, որպեսզի ցեղասպանությունները կանխարգելվեն ապագայում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Մելիտինեցի Գ. Ապրումներ Հայ կեանքի մութ ու լուսաւոր իրականութիւններուն հետ, Պէյրութ, 1969, հ. Բ, էջ 225:

[2] International Golden Rule. Sunday 7, 1924, pp. 1, 4. Ճիզմէճեան Մ. Գ, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, (1890-1925), Ֆրէզնօ, 1930, էջ 360, 366-368:

[3] Անդրեասեան Ա. Համազգային առաքելութիւն. 1906-1981, ԱՄՆ, 1981, էջ 53: Vertsman V. The Armenians in America. 1618-1976. A Chronology and Fact Book. New York, 1978, p. 9.

[4] Boghosian H. B. Highlights of Armenian History and Its Civilization. USA, 1957, p. 187.

[5] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921թթ., Պոստոն, 1922, էջ 8-12, 27, 30, 31: Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան 1915-1917թթ., Թիֆլիս, ա. թ., էջ 5, 6, 7: Լազեան Գ. Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 188, 202:

[6] Հայկ Վ. Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 994: Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1922, էջ 284: Ճիզմէճեան Մ. Գ. նշվ. աշխ., էջ 372:

[7] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 8-12, 27, 30, 31: Սահմանադրութիւն եւ կանոնագրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պոսթօն, 1917, էջ 1, 2, 19, 20: Ճիզմէճեան Մ. Գ. նշվ. աշխ, էջ 352, 353: Յուշամատեան Մեծ Եղեռնի, (1915-1965), Պէյրութ, 1965, էջ 891: Պարթեւեան Մ. Արարա. Հայկական Լէգէոնը, Աղեքսանդրիա, 1919, էջ 88, 102: Պոյաճեան Տ. Յ. Հայկական Լէգէոնը. Պատմական յուշագրութիւն, Ուօրրբաուն, 1965, էջ 86: The Armenians in Massachusetts. Boston, 1937, p. 54.

[8] Ճիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ, էջ 372-375, 417-419:

[9] Հայաստանի Հանրապետության Պատմության Պետական Կենտրոնական Արխիվ (ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 8ա-8բ: Ճիզմէճեան Մ. Գ. նշվ. աշխ, էջ 376:

[10] Ճիզմէճեան Մ. Գ. նշվ. աշխ, էջ 376: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 39:

Резюме

Американские армяне в годы Армянского геноцида.

Кнарик Авакян

Всестороннее изучение истории образования и развития самой большой и организованной армянской колонии Соединенных Штатов Америки более чем актуально и первостепенно, как важное звено в исследовании истории Армянской Диаспоры и американских этнических групп.

В ставшим роковым для армян годы Первой мировой войны (и после), американские армяне объединили весь свой умственный, финансовый, социальный, политический и прочий потенциал в целях оказания дипломатической, политической, военной и прочей всевозможной помощи родной стране и народу. Они активно участвовали в акциях в защиту Армянского Вопроса в Европе и в США.

Политическая нестабильность и кризисная ситуация в османской Турции и царской России после Первой мировой войны, а также потеря веры к союзным государствам, уничтожили заветную мечту многих эмигрантов о возвращении на Родину, окончательно обосновав их в Соединенных Штатах Америки.

Summary

The Armenian-Americans
During the Years of the Armenian Genocide.

Knarik Avakian

Under various historical circumstances, the Armenians were compelled to leave their native land and to migrate to different countries of the world, including the USA, for individual, educational, economic, political, cultural, religious and other purposes.

During the years of the First World War and the following years which were disastrous for the Armenian people, the Armenian community of the US, assembling its entire intercommunal intellectual, financial, public and political resources, has assisted the Motherland and its people by all the possible diplomatic, political, military and human means and has taken part in the enterprises aiming at the defense of the Armenian Action in Europe and in the USA.

The calamitous political situation created in Ottoman Turkey following the First World War and in Czarist Russia, as well as the loss of confidence in the Allied States destroyed in the soul of thousands of emigrants the sacred dream of returning to their Homeland and they definitively established in the United States of America.